

Գ. Բ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳԻՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳԻՐՔԸ

1675թվականին Մարսելում հրապարակվեց «Արհեստ համարողութեան» խորագրով առաջին հայերեն մաթեմատիկական գիրքը։ Գրքի անվանաթերթից պարզ կերպով երևում է, որ այն թարգմանություն է։ Թարգմանչը ու օգտագործված աղբյուրի մասին գրքում ոչ մի նշում չկա։

«Արհեստ համարողութեան» գիրքը չէր կարող վրիպել հայ բանասերների ուշադրությունից։ Սակայն նրանց հետաքրքրել է հարցի միայն մի կողմը, այսինքն՝ ով է թարգմանիլը։ Ուսումնասիրությունները բերել են այն եղանակացության, որ թարգմանությունը պատկանում է լեզվաբան Հովհաննես («Հովով») Հակոբյան-Կոնստանդինոպոլսեցուն։ նա գրաբարից թարգմանել է մի շարք գրքեր, որոնք տպագրվել են Վենետիկում, Հովոմում և Մարսելում։ Պատմությունից հայտնի է, որ 1674—1675 թթ. Հակոբյանը ապրել է Մարսելում, որտեղ կատարել է թարգմանություններ (տե՛ս ՀԱ, 1893, էջ 369—370, տե՛ս նաև Արշակ Ալպոյանեան, Պատմութիւն հայ դպրոցի, Գաճիրէ, 1947, էջ 417—418)։ Հովհաննես «Հովով» Հակոբյանը ո՞մ գիրքն է թարգմանել և ո՞ր լեզվից, ավելի քան 290 տարի մնում է անհայտ։ Հայ հեղինակի թարգմանած գրքի բնագիրը գտնելու ուղղությամբ մեր կատարած որոնումները տվեցին դրական արդյունք։ Այս հարցում դժվարությունն այն էր, որ հիշյալ գրքի վերնագրին համապատասխան գիրք գտնել Սովետական Միության և արտասահմանյան գրադարաններում մեզ չէր հաջողվում։ Ուստի որոշեցինք խնդիրը լուծել գոյություն ունեցող տարրեր լեզուներով մաթեմատիկական դասագրքերի հայ հեղինակի գրքի տեքստաբանական համեմատությամբ։ Մենք ուսումնասիրեցինք մինչև 1675 թ. հրատարակված ավելի քան 100 թվաբանա-

5 Kaf 1 A-42 321

EP̄S̄US
SC̄IP̄ERAT̄
DE R̄T̄

ԱՄԲՈՅԼԵՒ
ՏԵԱԿ

Թարգմանեցեալ ՚ի պէտա Հայկա
զունեաց և մահաւանդ վա
ճառահօնեաց :

Եւ տաղագրեցեալ ՚ի պապանի
սրբոյ Էջմիածնի և սրբոյ Սարդ
օհ զօրավարին :

Ի հայրապետութեան մն Յակո
բայ ամենից հայոց Կաթողիկոսի
և ՚ի մասաւութեան Լուսավովիո
սի շորեքտասաներորդի արքային
Կալենցաց :

ԴՐԱՐՉԻՎԵԱՑ

Յամի Ներ մարգեզութեան Տ.
1675. Օգոստոսի ամայ 25.
Դ. Յ. Հ. Բ. Տ. Պ.

Նկ. 1. Հայերեն բնագրի անվանաթերթը

CHRISTO
PHORI CLA-
BAMBERGEN-
SIS E SOCIETATE
I.E.S.V.

EPITOME ARITHMETICAE
Practica, nunc denuo ab ipso auctore
recognita, & aucta.



COLONIAE ACRIPPINAE,
Apud Bernardum Gualtherium.

Anno Domini, M. D. C. L.

Leber. Wiss. Landesbibl. Sac. Linz

կան գիրք։ Այս տարի Լենինգրադի Սալտիկով Շչեդրինի անվան պետական գրադարանի հնատիպ գրականության ֆոնդում մենք հայտնաբերեցինք 1650 թ. լատիներեն լեզվով հրատարակված այն գիրքը, որը հանդիսացել է հայ հեղինակի թարգմանության հիմնական աղբյուրը։ Այն գերմանացի մաթեմատիկոս Քրիստափոր Կլավիուսի՝ «Գործնական թվաբանության համառոտ շարադրանք» վերտառությամբ գիրքն է վերանայված ու լրացված իրեն՝ հեղինակի կողմից։ Ինչպես երևում է, բնագրի և թարգմանության վերնագրերը չեն համընկնում։ Սակայն երկու գրքերի տեքստերի, թվաբանական խնդիրների ու վարժությունների համեմատությամբ հաստատվեց, որ Հովհաննես Հակոբյանը իր ձեռքի տակ ունեցել է Քրիստափոր Կլավիուսի աշխատությունը։

Քրիստափոր Կլավիուսը (1537—1612) Արևմտյան Եվրոպայում հանդիսացել է ժամանակի հայտնի մաթեմատիկոս մանկավարժներից մեկը։ Նրա գրչին են պատկանում շատ աշխատություններ։ Մորիս Կանտորը իր մաթեմատիկայի պատմության երկրորդ հատորում բազմիցս անդրադառնում է Քրիստափոր Կլավիուսի աշխատություններին։

Կլավիուսի «Գործնական թվաբանության...» ձեռնարկը շատ անգամ հրատարակվել է ինչպես նրա կենդանության օրոք, այնպես էլ նրա մահվանից հետո, իսկ Հակոբյանի գիրքը լույս է տեսել 1675 թ.։ Նշանակում է հեղինակը պետք է օգտագործած լինել Կլավիուսի աշխատության վերջին հրատարակություններից մեկը։ Այդ բոլորից հետևում է, որ Հակոբյանը կամ նրա պատվիրատուն նախօրոք մտածել և խիստ ընտրություն են կատարել՝ թարգմանելու ժամանակի լավագույն թվաբանական ձեռնարկներից մեկը։

«Արհեստ համարողութեան» ...գրքի առաջաբանը և վերջաբանը շարադրված են գրաբար, իսկ ամբողջ տեքստը՝ աշխարհաբար։ Հարկ է նշել, որ այս աշխատությունը հայ մատենագրության մեջ հանդիսանում է աշխարհաբար լեզվով առաջին տպագիր գիրքը։

Գիրքը ծավալով 147 էջ է և բաղկացած է երկու մասից։ 79 էջից կազմված առաջին մասը ունի հինգ, իսկ երկրորդ մասը՝ երեք գլուխ։ Թարգմանիլը առաջին գլխում մանրամասն բացատրելով տասնորդական ռապողիցիոն» սիստեմը, գործ է ածում զերո տերմինը, իսկ թվանշաններն անվանում է «գրեր»։ Նա առաջին գլխի վերջում բերում է հետևյալ աղյուսակը։

բիւր	ճռ	ժռ	ո	ճ	ժ	ա
1	1	1	1	1	1	1. միաւոր
2	2	2	2	2	2	2 տասնաւոր
3	3	3	3	3	3	3 հարիւրաւոր
4	4	4	4	4	4	4 հազարաւոր
5	5	5	5	5	5	5 ժ հազարաւոր
6	6	6	6	6	6	6 ճ հազարաւոր
7	7	7	7	7	7	7 բիւրաւոր
8	8	8	8	8	8	8 ժ բիւրաւոր
9	9	9	9	9	9	9 ճ բիւրաւոր միլիարաւոր ժ միլիարաւոր ճ միլիարաւոր միլիասաւոր

«Բիւր» բառը, որը նշանակում է 10000, այստեղ գործածվում է միլիոնի իմաստով: Ուշպության արժանի են «միլիարաւոր» ու «միլիասաւոր» տերմինները, որոնք առաջին անգամն են օգտագործվում մաթեմատիկական գրականության մեջ: Առաջին մասի հաջորդ չորս գլուխներում բազմաթիվ օրինակներով շարադրվում են թվաբանական շորս գործողությունները: Գումարում, հանում, բազմապատկում ու բաժանում, բաժանման գործողությունը կատարվում է «Դալերա» եղանակով: Նյութի շարադրանքին ավելի մոտիկից ծանօթացնելու համար, կատարենք մի քանի քաղվածք: Երկրորդ գլխում՝ «Ճաղագս թէ ինչ սաղ թվի բարդելն» վերնագրի տակ հեղինակը գրում է. «Բարդելն էն է, որ չոկ չոկ գրած թվերն մեկ տեղ ժողովել կուտուցանէ»: Գումարման այսպիսի սահմանումը մեզ շպետք է զարմացնի, եթե «գումարում» բառը ձևականորեն փոխարինվում է «ժողովել» բառով: 17-րդ դարում և 18-րդ դարի սկզբին օտարերկրյա ու հայրենական թվաբանության հայտնի բոլոր դասագրերում, ըստ էության, ունենք համանման սահմանում: Ըստ հայտնի մաթեմատիկոս Լ. Ֆ. Մագնեցկին իր թվաբանության դասագրքում, որ լուս տեսակ 1703 թ. և բացառիկ դեր խաղաց Ռուսաստանում ուսամական մաթեմատիկական գրականության ու կրթության պատմության մեջ, գրում է «Адицио или сложение есть двух или многих чисел в один перечень совокупление». Հայ հեղինակը, նախքան բազմապատկման գործողություններին անցնելը, բերում է մեկ ծանոթ սովորական բազմապատկման աղ-

20

հանելու իսկ թե վերի թվի ամեն
կազմի գրեն . . . լինի . միւս գրեն
կառաւումք . այսինքն . հարիւրաւու
րեն . ինչպէս ես օղինակս կու-
ցացանե՞ :

4	5	0	0	0	2	6	3	0	4	8	2	7
3												
9												
2												
9												
0												
5												
7												
0												

3 9 2 9 0 3 4 5 6 7 8 9 2

0 5 7 0 9 9 1 7 3 6 9 3 5

(3) Երայ . 2 . կու հանեմը 'ի թվեց
• • 7 : կու մընայ . 5 . և կու գը
նեմը , 5 . խաղի տակն . Բայց , 7
մ կարեք հանմիլ 'ի գրեն , 2 . գոյր
կառաւումք մեկ թիւ մի 'ի գրեն . 8
և կանեմը 12 : կու հանեմը . 9 . և
կու մընայ . 3 : և կու գնեմը . 3 .
խաղի տակն . Պատրժեալ . 9 . մ կարեք հանմիլ 'ի գրեն , 7 . ար յա
ռած քան զգաբանանում , 8 . եր .
մոխ կառաւումք մեկ թիւ մի 'ի գրեն
4 . և կանեմը , 17 . կու հանեմը
2 . և կու մընայ . 9 . և կու գնեմը
9 . խաղի տակն : Պատրժեալ . 7 .
մ կարեք հանմիլ 'ի գրեն . 3 . ար
յառած քան զգաբանանում , 4 . եր
մոխ կառաւումք մեկ թիւ մի 'ի
գրեն

Ակ. 3.Մի էլ հայերեն գրեից

mutuatem ab alia figura versu sinistram, quae unius significabit 100. unitates respectu illius figurae, à qua subit allio non potest fieri: sed tunc loco figura o. animo reponenda era figura 9. & figura, à qua mutuo accepta est unius, una unitate minor erit. Ita quoq; si plures huiusmodi figurae o. antecedentes illam à qua unitatem mutuantur, cogitanda essent omnes veluti 9. & illa que mutuo dedit unitatem, una unitate minor, que omnia hoc exemplis perspicua.

4500026304827

3929034567892

570991736935

Primum subductus 2. ex 7. remanent 5. Dénide quia 9. detrahi non possunt ex 2. mutuabitur unitam ab 8. Et deinde 9. ex 12. (quem numerum exprimit 1. quā mutuū accepimus, & 2.) reliquuntur 3. Rursus quia 8. ex 7. (superior enim figura 8. cum mutuo dederit unitatem, valet tantu 7.) subit abī nequeunt, mutuabitur unitatem à 4. & sic subductus 8. ex 12. remanet 9. Post hac, quia 7. ex 3. (figura enim 3. ab unitatem mutuo datā valet tantu 3. nō possunt auferri, accipimus mutuo unitatem à 3. post 0. Sed quoniam hac unius valet 100. respelli figura 3. à qua non potest fieri subtrahio. Et nos indigemus tantum 10. ne ēst ēst. 12 sc̄ 100. mutuemur 10. relinquantur 2. Hinc sit figura 3. valeat tantu 2. & super 0. reponenda sit animo figura 9. que significat 90. respelli figura, à qua sub-

յուսակը. բազմապատկման աղյուսակի բացակայության դեպքում տրվում է բազմապատկման մի եղանակ, հետեւյալ բացատրությամբ.

«Կուզենք իմանանք, թե 8 անգամ 9 քանի է, և չենք գիտեր. կու տեսնումք թե 8 քանի թվով պակաս է քան զտասն, և կու գտնումք, որ երկու թվով պակաս է, և կու գրեմք 2 յուր դեմքն Այսպես կու գտնումք որ 9. մեկ թվով պակաս է քան զտասըն. և կու գրեմք 1 յիւր դեմքն. ապա 2 մեկով կու բազմացնենք և կու դնեմք խազի տակն. յետո. 2-ի յըննէ դուրս կու հանեմք և կու մնայ ։ Կամ 1-ին ութէն դուրս կու ձգեմք և կու մնայ միշտ 7 և կու դնեմք խազի տակն. և այսպէս կու գտնումք որ 8 անգամ 9 կանի 7»։

Երկրորդ մասի առաջին գլուխն ունի հետեւյալ վերնագիրը՝ «Յաղագ թէ ինչ է կտրատած թիվն»։

Տեքստը սկսվում է հետեւյալով. «Կտրտված թիվն սաղ թվի կտորն է, ինչպես դնեմք թե մեկ ոսկին 200 ստակ է; 50 ստակն որ է մին կարտ: 100 ստակն որ է երկու կարտ կամ կէս. 150 ստակն որ է երեք կարտ, մեկ ոսկուն կտրտանք կասվին: Այսպես դնեմք թէ մի մարշկիլին 100 ստակ է: 25 ստակն որ է մին կարտ: 50 ստակն որ է կէսն կամ երկու կարտ. 75 ստակն որ է երեք կարտ. մեկ մարշկիլին կտրտանք կամկեն: Դարձեալ թումանն 10000 դիան է: 2500 դիանն որ մին կարտ: 5000 դիանն որ է կէսն, կամ երկու կարտն: 7500 դիանն որ է երեք կարտն. մի թումանին կտրտանք կամկին»։

Այս բացատրությունից հետո, հաջորդաբար շարադրվում են թվաբանական շորս գործողությունները անվանական թվերի նկատմամբ: Երկրորդ և երրորդ գլուխներն ունեն հետեւյալ վերնագրերը՝ «Յաղագ թէ ինչ է երեքի կանոնն և թէ ինչ է ընկերությունն» և «Յաղագ առևտրից վաճառականց»: Այս գլուխներում շարադրվում են մի քանի տասնյակ թվաբանական խնդիրներ:

Երենք այդ խնդիրներից մի պարզ օրինակ:

«Ինչպէս թե որ Պողոսն, Ղուկասն, Յոհաննէսն, և Մարտիրոսն ընկերանան մէկ տեղ. Պողոսն դնէ 60 մառշիլ: Ղուկասն դնէ 100 մառշիլ: Յոհաննէսն դնէ 120 մառշիլ: Եւ Մարտիրոսն դնէ 200 մառշիլ: Եւ այս բովանդակի ժողովն 6000 մառշիլի շահ անեն մին քաղաքում, յետոյ ուզեն իմանան թէ ամէն մարդի փողին կեօրայ ինչ շահ կուհանի իւրն...» (էջ 116—117):

«Արհեստ համարողութեան» գրքի համեմատությունը Քրիստափոր Կլավիուսի «Գործնական թվաբանության...» հետ որոշակի կերպով ցուց է տալիս, որ առաջին հինգ գլուխների նյութը հիմնականում համընկնում է:

Երկրորդ մասի երեք գլուխների նյութը հայ թարգմանիլը քաղցի է հիշյալ աշխատության հաջորդ գլուխներից և այլ դաժամանակ նա դրսեւրել է նաև ինքնուրուվնություն։ Այսպես, օրինակ, առաջին մասի գլխում նա զետեղել է մի աղյուսակ, որը կլավիուսի գրքում չկա։ Նախքան ամբողջ թվերի բաժանման գործողության անցնելը, Հակոբյանը զետեղում է բաժանման մի աղյուսակ, որը նույնպես կլավիուսի մոտ չկա։ Կլավիուսի գրքից վերևում նշված թվաբանական խնդրի տեքստում հայկական անունները մտցրել է հայ հեղինակը։

Քրիստափոր կլավիուսի գիրքը իր բովանդակությամբ ավելի հարուստ է, քան հայերեն գիրքը։ Հայ թարգմանիլը կամ նրա պատվիրատուն որոշակի նպատակ են հետապնդել, ուստի շատ հարցեր, որոնք պարզաբանված են կլավիուսի գրքում, հայերեն գրքում իրենց արտացոլումը չեն գտել։ Այդ հարցերից են թվաբանական, երկրաշափական պրոգրեսները, քառակուսի արմատ հանելը և այլ հարցեր։ Գրքի առաջարանում այդ նպատակի մասին գրված է. «Ճեսնելով մեր աղքին պատկանող վաճառականների կարիքը, հաշվական արվեստը կատարելապես շիմանալու պատճառով, լավ համարեցինք այս գիրքը թարգմանել մեր լեզվով, որպեսզի սրանով վարժվածները կարողանան հեշտ կերպով իրենց գործով պարագել առանց մտավոր դեգերումների»։

17-րդ դարը հայ ժողովրդի պատմության ծանր շրջաններից մեկն է. իր պետականությունից գրկված, ցրված աշխարհի տարբեր երկրներում, հայերը շարունակում են այդ գժվարին պայմաններում ևս պահպանել ու զարգացնել իրենց մշակութը, լեզուն։

Առանձին հայ մտավորականներ տեսնելով 17-րդ դարի մշակութի վերելքը Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում, մասնավորապես մաթեմատիկական գիտության բնագավառում, աշխատում էին իրենց ուժերին շափ օգտակար լինել հայ ժողովրդին։ Նրանց թվին էր պատկանում Հովհաննես «Հովով» Հակոբյանը, որն այլ գրքերի հետ միասին թարգմանեց, մշակեց ժամանակի համապատասխան մաթեմատիկական տերմիններ ու աշխարհաբար լեզվով տպագրեց առաջին մաթեմատիկական գիրքը։ Այդ գիրքը խոչընդունակ է կատարել հայերի մեջ մաթեմատիկական գիտելիքները տարածելու գործում։

17-րդ դարում հրատարակված «Արհեստ համարողութեան» գիրքը, որը պատմական այլ հուշարձանների հետ միասին զարդարության մեջ է հայության պատմության մեջ առաջին գործում է կատարել հայերի մեջ մաթեմատիկական գիտելիքները տարածելու գործում։

117

շել. և Մարտիրոսն դնե. 200.
 մառշիլ. Եւ այս բռվանգակի փո
 զովն. 6000. մառշիլ շահ ունեն
 մին քաղաքում, յետոյ ուղեն իժ-
 նան թէ ամեն մարդի փողին կեօ-
 րաց ինչ շահ կառանի իւրն, յա-
 ռաջ պիտի զըորսի տված փուղը
 բարգեն մէկ աեզ. որ կու լինի
 480. մառշիլ. և գնեն ուստին
 աեւոյ. Յետոյ. 6000. մառշիլ
 շահն գնեն մէջ տեղն. ապա զըոր-
 սի փողն ջոկ ջոկ գնեն երրորդ
 աեզն. ինչպէս էս օրինակումն.

Առաջին.	Երերորդ.
Մայիս մայիս 480.	Բարվանգակ շահն 6000.
Չորրորդ.	Չորրորդ.
Չորսի մայիսն ջոկ ջոկ	Շահն չորսի ջոկ ջոկ
060.	9. 0750.
100.	1. 1250.
120.	3. 1500.
200.	11. 2500.

Եւ ականոն երերորդ կանոնով առաջ
 մայիս

Նկ. 5. Մի էշ հայերն պրից

sunt in mundis quibusdam 600^l. aur. Primus autem illorum contulerunt 60. aur. secundus 100 tertius 120. & quartus 200. In questione tamen vocatur. quid quisq; ex illo lucro accipere debeat, habita ratione pecunia, quam expensum. Ante omnia colligenda est summa ex omnibus pecunias, que est 480. aur. Deinde quales influenda est regulatrum hoc modo. Si 480. aurei (que est pecunia ex omnibus pecunias collecta) lucra sunt 6000. aur. quid lucrabitur 60. aur. quid 100. quid 120. & quid 200. quos singuli posuerint velut hic apparet.

Aur. Luct. aur.	Aur.	Luct. aur.
480. 600.0.	60 ^l	750. Primi.
	100 ^l	1250. Secundi.
	120 ^l	1500. Tertiij.
	200 ^l	2500. Quarti.
		6000.

Eadem operatione, ut praecepit regulatum, reperiens, primum debere accipere 750. aur. secundum 1250. tertium 1500. & quartum 2500.

Examen huius rei erit, si lucra omnium in unam summatam collecta efficiant lucrum totum, ut in proposito exemplo factum esse vides.

- Quæst. 2. Tres mercatores, emptis mercibus nauem onerarum; Primi merces constiterunt 200. aur. secundi 500. tertij 180. Graui deinde tempestate orta, proiecta sunt in mare merces grauiores, qua constabant 400. aur. Conuenit autem inter eos, ut iudicetur hec communie

բում է Մաշտոցի անվան մատենադարանի ցուցասրահը, հայ մշակույթի ու գիտության սերմնացանների այն հատիկներից է, որը մերժամանակներում տալիս է առատ բերք։ Այդ գիրքը արժանի է մաթեմատիկոս մանկավարժների ու լեզվաբանների հատուկ ուշադրությանը։

Г. Б. ПЕТРОСЯН

ПЕРВАЯ ПЕЧАТНАЯ КНИГА ПО МАТЕМАТИКЕ НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Резюме

Первая книга по математике на армянском языке напечатана в Марселе в 1675 г. под заглавием «Искусство счисления».

Объем книги 147 страниц. Предисловие и послесловие ее написаны на древнеармянском языке, а основной текст—на новоармянском. Из предисловия и титульного листа видно, что книга переводная. Кто является переводчиком и с какого языка сделан перевод, из книги не видно.

В первой части книги излагаются сущность десятичной—«позиционно» системы и правила четырех арифметических действий с целыми числами.

Первая глава второй части посвящена четырем арифметическим действиям с дробями. Во второй и третьей главах излагаются способы решения арифметических задач путем применения простого и сложного тройного правила.

Содержание книги дает основание утверждать, что она была предназначена главным образом для армянских купцов.

Изучение армянской печатной литературы показывает, что переводчиком рассматриваемого учебника был Оганес «Голов» Акопян из Константинополя.

Сравнением содержания книги «Искусство счисления» с содержанием учебников по арифметике XVII века впервые показывается, что Акопян в качестве основного источника использовал учебник практической арифметики Христофора Клавиуса.